

ՀՀ ԱԳՆ Պետական արարողակարգի ծառայություն

01 / 01 / 03 / 06

(ոլորտի կամ պետական մարմնի անվանումը)

2020-2022

ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՅՏ

ԵՎ 2020

ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏ

1. Իրավիճակի նկարագրությունը և հիմնական խնդիրները¹

1.1. Ոլորտի (համակարգի) ընդհանուր նկարագիրը.

ՀՀ ԱԳՆ Պետական արարողակարգի ծառայությունն իր հիմնական նպատակներին և խնդիրներին համապատասխան, 2020-2022թթ.. Ժամանակահատվածում կիրականացնի ՀՀ Վարչապետի, Հանրապետության նախագահի, փոխվարչապետի, ԱԳ նախարարի ղեկավարած պատվիրակությունների՝ օտարերկրյա պետություններ այցերի և նրանց մասնակցությամբ Հայաստանի Հանրապետությունում անցկացվող միջազգային բնույթի պաշտոնական միջոցառումների, օտարերկրյա պետությունների, կառավարությունների, արտաքին հարաբերությունների գերատեսչությունների և միջազգային կազմակերպությունների ղեկավարների ու նրանց ուղեկցող անձանց Հայաստանի Հանրապետություն այցերի պատշաճ մակարդակով նախապատրաստումն ու իրականացումը: Ծառայության գործառույթների մեջ է մտնում նաև ՀՀ-ում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների հետ դիվանագիտական արարողակարգային գրագրության իրականացումը, աշխատանքային և արարողակարգային հանդիպումների կազմակերպումը, դիվանագիտական անձնակազմի անձեռնմխելիության և արտոնությունների հետ կապված հարցերի կարգավորումը, օտարերկրյա և արտասահմանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների հետ տարվող արարողակարգային աշխատանքները, դրանց ղեկավարների հավատարմագրման և պարտականությունների ստանձման գործընթացները, ինչպես նաև ՀՀ Վարչապետի, ՀՀ Նախագահի և բարձրաստիճան այլ պաշտոնյաների մասնակցությամբ պետական միջոցառումների /ապրիլի 24, մայիսի 9, սեպտեմբերի 21 և այլն/ կազմակերպումը և անցկացումը ըստ արարողակարգի:

Պետական մարմինների իրավասության ներքո մատուցվող ծառայությունների շրջանակի նկարագրության ամփոփ աղյուսակ			
N	Ծառայությունների շրջանակի նկարագրություն	Շահառուների շրջանակի նկարագրություն	Պետական հատվածի կողմից ծառայության փոխհատուցման ծավալը ²
1.	ՀՀ Վարչապետի, Հանրապետության նախագահի, փոխվարչապետի, ԱԳ նախարարի ղեկավարած պատվիրակությունների կողմից ՀՀ-ում և օտարերկրյա պետություններում անցկացվող միջազգային բնույթի պաշտոնական այցերի նախապատրաստում և իրականացում:		Ծառայության փոխհատուցումն ամբողջ ծավալով երաշխավորվում է պետական բյուջեի հաշվին:

2. ՄԺԾԾ Ժամանակահատվածում ոլորտում (համակարգում) իրականացվելիք ծախսային ծրագրերը (պարտավորությունները)

Համակարգի ընդհանուր նպատակների և գերակայությունների իրականացման համար կպահանջվի. 2020 թվականի համար՝ 201721.5 հազ. դրամ , 2021 թվականի համար 188619.0 հազ. դրամ և 2022 թվականի համար 191448.0 հազ. դրամ բյուջետային հատկացումներ:

ա. <<Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր>>

ՀՀ Վարչապետի, Հանրապետության նախագահի, փոխվարչապետի, ԱԳ նախարարի ղեկավարած պատվիրակությունների օտարերկրյա պետություններ այցելի թվի սպասվող աճի հետ կապված, նախատեսվել է ավելացում 30%-ի չափով 2018 թվականի համար նախատեսված գումարի նկատմամբ / համաձայն 23.03.2018 թվականի Պետական արարողակարգի մասին ՀՀ օրենքի և ՀՀ Պետական արարողակարգի ծառայության կանոնադրության 3-րդ մասի 3,4,5 կետերի/ :

բ. <<Ներկայացուցչական ծախսեր>>

Օտարերկրյա պետությունների Նախագահների, վարչապետների, ԱԳ նախարարների և իրենց հավասարազոր բարձրաստիճան պաշտոնյաների այցելությունների թվի աճի հետ կապված, նախատեսվել է ավելացում 20%-ի չափով 2018 թվականի համար նախատեսված գումարի նկատմամբ / ՀՀ Պետական արարողակարգի ծառայության կանոնադրության 3-րդ մասի 6,7,8,9,11,12 կետերի/:

գ. <<Տրանսպորտային սարքավորումների ձեռք բերման ծախսեր>>

ՀՀ ԱԳՆ Պետական արարողակարգի ծառայության ենթակայության տակ գտնվող, 2007 թվականին ձեռքբերված <<TOYOTA COROLLA 1.6 GAS>> մակնիշի ծառայողական ավտոմեքենայի հետագա շահագործումը տնտեսապես նպատակահարմար չէ: Մեքենան հնամաշ է, շահագործման ընթացքում բազմիցս խափանվել է, անհարմարություն պատճառելով մեքենայում գտնվող օտարերկրյա հյուրերին: Ծառայության գործառույթներից ելնելով, օտարերկրյա պետությունների պատվիրակությունների Հայաստանի Հանրապետություն այցելող նախապատրաստելու շրջանակներում հաճախ առաջանում է ՀՀ մարզեր մեկնելու անհրաժեշտություն, սակայն վերոնշյալ ավտոմեքենան տեխնիկական թերությունների պատճառով չի օգտագործվում այդ նպատակով: Ծառայության գործառույթները պատշաճ մակարդակով կատարելու նպատակով դիմել ենք Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահին՝ հնարավորության դեպքում վերոնշյալ ավտոմեքենան համապատասխան ավտոմեքենայով փոխարինելու վերաբերյալ խնդրանքով, սակայն առաջարկվող մեքենաները ևս ունենի տեղնիկական թերություններ:

Ուստի խնդրում ենք 2020-2022թթ. ՄԺԾԾ հայտով ներկայացված 15890.0 հազ. դրամ գումարը նախատեսել 2020 թվականի պետական բյուջեում՝ հնամաշ մեքենան նորով փոխարինելու նպատակով: